



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

58, 59, 60, 61,
62, 63, 64, 65,
66, 67, 68, 69, 70,
71, 72, 73, 74, 75

2

L-85

2010



ՀԱԱՐԱՆ

ՀՈԳԵՇԱԶ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՅ

ՄԵԾԻՆ

ՆԵՐՍԵՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՄԵՐՈՅ

Տպագրեալ հրամանաւ վեհափառ Տեառն
ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԱՅ Դ,
Աստուածընտիր Կաթողիկոսի Ամենայն Հայոց.



Ի ԹԷՂՆՈՍԻՄ,

Ի Տպարանի Խաչիպեան Ուսումնարանին.

ՌՅԺԹ = 1869

«Եթէ կրնաս ձայնդ բարձրացնել, խօսէ: Եթէ
 գիրք միայն թողուն քովդ, գրէ: Փողոցին մէջ բա-
 րի մը վրայ կանգնած՝ քարոզէ, եթէ կրնաս. եթէ
 հրապարակական կեանքը փակ է, տանդ մէջ բան
 սովորեցուր: Եթէ ձայն չունիս, օրինակ տալու կա-
 րողութիւն ունիս: Այս ոչ առաքինութիւն է, ոչ
 կարգէ դուրս գործողութիւն. այլ պարտք է՝ պարզ
 ու յստակ: Աշխարհիս մէջ Աստուծոյ կողմանէ ա՛յն
 եղիր՝ ինչ որ է բժիշկը մարմնոյ հիւանդութեանց
 համար. բժիշկը պարտական է հասնելու ամենայն
 ցաւագարաց, եւ դու պիտի հասնիս ամենայն տգի-
 տաց: Քու Ստեղծողդ կենացդ համարը պիտի պա-
 հանջէ քեզնէ: Յոյսդ մի՛ դներ բացասական առա-
 քինութեան վրայ, որ միայն ուրիշի վնաս չընեն է.
 քեզի օրէնք տրուած է որ հասարակաց գործոյն
 համար աշխատիս, եղբարքդ սիրես, լուսաւորես,
 մխիթարես, ազատես մոլութենէ ու մոլորութենէ,
 եւ առ Աստուած առաջնորդես: Կեանքն ալ այս է,
 մարդն ալ այս»:

ԺԻՒԼ ՍԻՄՈՆ,

(Իմաստասէր եւ Քաղաքագէտ վաղընացի:)



Дозволено Цензурою. Тифлисе, 2 Января 1869 г.

ՏՊԱԳՐԵԱԼ ԱՐԴԵԱՄԲԳ

ՄԵԾԱՊԱՏԻԻ ԱՌՆ

ՆԵՐՍԵՍԻ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՊԵՏՐԻՉԵԱՆՑ

Ի ՊԱՏԻՒ ՅԻՇԱՏԱԿԻ

ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԻՍԻ ՊԱՐԹԵԻԻ.



28420-43

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՑ

Մ Ե Ծ Ի Ն Ն Ե Ր Ս Ե Ս Ի

ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ.

Մարդկանց մէջ սովորութիւն եղած է շատ
 բնական՝ Մեծ անունը տալ իրենց մէ-
 ջէն այնպիսիներուն որ անձնական կա-
 տարելութիւններով եւ զարմանալի գործերով ցու-
 ցուցած են իրենց գերազանցութիւնը, եւ անմա-
 հացուցած են իրենց անունը որդւոց որդի եւ գարէ-
 գար: Այսպիսի էր Մեծն Աղեքսանդր Մակեդոնացի՝
 Յունաց թագաւորներուն մէջ, Մեծն Կոստանդինոս՝
 Հռովմայեցոց ինքնակալներուն մէջ, Մեծն Տրդատ՝
 մեր թագաւորներուն մէջ, Մեծն Կարոլոս՝ Սպանիոյ
 եւ Գերմանիոյ կայսերացը մէջ, Մեծն Լուդովիկոս՝
 Գաղղիոյ թագաւորացը մէջ, Մեծն Պետրոս՝ Ռուսաց
 ինքնակալներուն մէջ, Մեծն Փրեդերիկոս՝ Բրուսիոյ
 թագաւորներուն մէջ, եւ այլն:



11410-57

Աստուծոյ առջեւ իրաւ որ բոլորովին ուրիշ ար-
ժանաւորութիւն կազանջուի Մեծ ասուելու համար .
կազանջուի որ խոնարհամիտ եւ հեղաբարոյ լինի
մարդ՝ հանդերձ անմեղութեամբ, եւ աստուածային
օրէնքները ամենայն ճշգուծեամբ պահպանէ եւ կա-
տարէ, ուրիշներուն ալ պահպանել տայ, որպէս զի
կարողանայ Մեծ կոչուիլ. « Որ արասցէ եւ ուսուցէ
(զփոքունս անգամ՝ ի պատուիրանացն Աստուծոյ), նա
Մեծ կոչեցի յարքայութեան երկնից . . . Որ խո-
նարհեցուցէ զանձն իւր իբրեւ զմանուկ՝ նա եղիցի
Մեծ . . . Չէ յարուցեալ ի ծնունդս կանանց մեծ քան
զՅովհաննէս Մկրտիչ, բայց փոքրիկն յարքայութեան
երկնից մեծ է քան զնա »:

Այս հիման վրայ՝ Բրիստոսի սուրբ Եկեղեցին ամէն
ժամանակ Մեծ անունը տուած է նաեւ այն սակաւա-
թիւ ընտրելոց Աստուծոյ՝ որ աստուածահաճոյ ճըշ-
մարիտ եւ կատարեալ խոնարհութեան ու անմեղու-
թեան հետ ի միասին ունեցեր են եւ մեծամեծ կա-
տարելութիւններ, մանաւանդ գերազանց վեհանձնու-
թիւն, զարմանալի մեծագործութիւն, աշխարհի եւ
եկեղեցւոյ երեւելի օգտաւէտ ծառայութիւն, եւ ոչ
միայն յերկինս՝ այլ եւ ի վերայ երկրի անմահական
անուն ժառանգելու արժանաւորութիւն: Այսպիսի
են Մեծ նահապեան Աբրահամ, Մեծն Մովսէս մար-
գարէ, Մեծ Կարապետն Յովհաննէս, Մեծ խոստովա-
նողն Բրիստոսի՝ սուրբ հայրապետն մեր Գրիգոր Լու-
սաւորիչ, Մեծն Անտոն ճգնաւոր, Մեծն Աթանաս,
Մեծն Բարսեղ հայրապետ, եւ ուրիշները: Եւ ահա

սոցա կարգէն է նաեւ սուրբ հայրն մեր Մեծն Ներսէս
Պարթեւ՝ Հայրապետ ազգիս Հայոց, որոյ այսօր տօ-
նախմբութիւնը կատարելով՝ պէտք է վարքն ու պատ-
մութիւնն ալ յիշատակեմք ի վառս մեծին Աստուծոյ
եւ ի խրատ անձանց մերոց:

Մեծն Ներսէս սրբոյն Գրիգորի Լուսաւորչին թողա-
նը թողն էր. վասն զի սրբոյն Վրթանիսի սուրբ Յու-
սիկ որդւոյն՝ Աթանազինէ որդւոյն զաւակն էր: Տղայ-
ութեան ժամանակէն իւր երջանիկ պապուն՝ սրբոյ
Յուսկան ձեռքը մեծնալով, Աստուծոյ երկիւզն ու սէրը
հիմն գրած էր Ներսէս իւր դաստիարակութեանը .
որով եւ ամենայն հարկաւոր գիտութիւնները, մա-
նաւանդ յունարէն լեզուն եւ աստուածային գրոց
տեղեկութիւնները մեծ յաջողակութեամբ սովորեցաւ
Կեսարիոյ դպրոցներուն մէջ ի մանկութեան: Անկից
Կոստանդնուպօլիս գնաց, ուսմունքը կատարելագոր-
ծեց, եւ ամէն տեսակ առաքինութեամբ այնպէս պայ-
ծառացաւ ու սիրելի եղաւ ամենուն որ Ապիսոնէս
անունով երեւելի իշխանին փեսայացաւ, եւ աստուա-
ծապարգեւ որդի մի ունեցաւ՝ որ է սուրբն Սահակ
պարթեւ:

Այն ժամանակները Փառներսեհ կաթողիկոսը վախ-
ճանեցաւ. եւ մեր Արշակ Բ թագաւորը արգէն լսած
լինելով Ներսեսի համբաւը, խորհուրդ արաւ եպիս-
կոպոսներուն ու նախարարներուն հետ, մարդիկ յու-
ղարկեց եւ հրաւիրեց զինքը Հայաստան: Առջի բե-
րանը բողոքածակապէս հրաժարեցաւ երանելին իրեն

առաջարկուած կաթուղիկոսութեան պաշտօնէն, աղէկ գիտնալով այն իշխանութեան ծանրութիւնը, ազգին բնաւորութիւնը, վերցուելու անկարգութեանց բազմութիւնը, անելու բարեկարգութեանց դժուարութիւնները. բայց երբոր բոլոր ազգը շատ ստիպեց զինքը եկեղեցւոյ օգտին ծառայելու, հնազանդեցաւ աստուածային կոչման. միայն թէ առաջ խօսք առաւ թագաւորէն ու մեծամեծներէն որ չնեղանան՝ եթէ իւր սլարտքը կատարելով յանգիմանելու լինի մեծի եւ պզտիկի պակասութիւնները, եւ սրբոյ Լուսաւորչին ժամանակէն յետոյ մտած անկարգութիւնները վերցընելու աշխատի: Այնուհետեւ գնաց Կեսարիա 364 թճականին, եւ եպիսկոպոսապետ ձեռնագրուեցաւ այն քաղաքին մետրապօլիտէն՝ իւր նախորդներուն պէս, որ ի սրբոյ Լուսաւորչէն սկսեալ՝ Կեսարիոյ արքեպիսկոպոսներէն կառնուին կաթուղիկոսական ձեռնագրութիւնը:

Սրբոյն ներսեսի օծութեան ժամանակը բոլոր ժողովուրդը տեսաւ որ Հոգին սուրբ ազաւնիի կերպարանքով՝ խորանէն գալու պէս եկաւ իջաւ երանելոյն վրայ. յետոյ երբոր ներսէս սուրբ պատարագը կմատուցանէր՝ եկեղեցւոյն վրայ երկնքէն լոյս իջաւ ու սինաձեւ կեցաւ, եւ հրեշտակներու փառաբանութեան ձայներ լսուեցան. իսկ երբոր պատարագը վերջացուց սուրբ հայրապետը եւ եկեղեցիէն դուրս ելաւ, ամէնքն ալ տեսան որ երեսը Մովսէս մարգարէին կերպարանացը պէս պայծառացեր էր. ուստի երանի կուտային այնպիսի հովուապետ ունեցող ազգին:

Հայաստան գարձած ժամանակը՝ ճանապարհին վրայ ամէն քաղաքներէն ու գեղերէն խումբ խումբ կվաղէին կուգային ժողովուրդները որ սրբոյն օրհնութիւնն ընդունին. եւ շատ հիւանդներ բժշկութիւն կգտնէին: Իսկ երբոր սահմանէն ներս մտաւ, Արշակ թագաւորը առջեւն ելաւ շատ նախարարներով մինչեւ Առիւծ լեռը, անկից առաւ տարաւ մեծ հանգիստով Էջմիածին, եւ բոլոր ազգը մեծապէս ուրախացաւ՝ իբր թէ նոյն իսկ մեր սուրբ Լուսաւորիչը լինէր տեսածն ու ընդունածը: Սուրբն ներսէս շուտով հասկըցուց ամենուն որ չեն խաբուած իրենց ակնկալութեանը մէջ. իսկոյն ձեռք զարկաւ ամէն կողմանէ բարեկարգելու եկեղեցին. շատցուց ընտիր եւ գիտուն եկեղեցականները, գիտնալով որ նոցա ազիտութեամբն ու ամարգութեամբը կկորսուի ազգն ու եկեղեցին, եւ նոցա ուսումնականութեամբն ու բարեկրթութեամբը կպայծառանայ եւ առաջ կերթայ: Անձամբ եւ նոցա ձեռքովը խրատեց աշխարհականները՝ թէ խօսքով եւ թէ մանաւանդ բարի օրինակով, եւ գիշեր ցօրեկ կաշխատէր որ ազգին մէջ յառաջանայ եւ ծաղկի ճշմարիտ աստուածպաշտութիւնն ու բարեկարգութիւնը: Ամէն բանէ աւելի փոյթ ու խնամք ունեցաւ ազքատաց կարօտութիւնը լեցընելու, եւ կատարեալ ողորմածութեամբը ջնջեց վերուց եկեղեցականաց մէջէն արծաթսիրութիւնն ու ազահութիւնը. վասն զի եթէ արծաթսիրութիւնը կուպաշտութիւն է, ինչպէս որ կասէ սուրբն Պօղոս, գիտէր մեծն ներսէս ալ որ արծաթա-

սէր եկեղեցականը ոչ թէ քահանայ է Աստուծոյ Բարձրելոյ, այլ պաշտօնեայ կռոց, եւ կռապաշտութեան քարոզիչ. այն մոլութիւնն որ ջնջուեցաւ ազգին մէջէն, աշխարհականներն ալ սկսան առատապէս ընծայել իրենց ստացուածքը ազքատաց եւ եկեղեցեաց, ինչպէս որ միշտ կ'պատահի: Քիչ ատենէն լցուեցաւ Հայաստան բարեկարգ վանքերով ու պայծառ եկեղեցիներով, պաղաբեր դպրոցներով ու բարեգործական հիւանդանոցներով, եւ նոյն իսկ հայրապետանոցը կամ կաթողիկոսարանը ազքատաց եւ կարօտելոց հիւրանոց դարձաւ. վասն զի սրբոյն ներսեսի սեղանէն անպակաս էին կոյրեր՝ կազեր ու ամէն տեսակ ցաւագարներ, որոց շատ անգամ անձամբ կ'ծառայէր սուրբ հայրապետը. անոնց կերակուր ինքը կուտար, ձեռքերնին ջուր կ'լեցընէր, սոքերնին կըլուանար ու մինչեւ վէրքերնին իրեն սուրբ ձեռօքը կգարմանէր:

Քանի մի անկարգութիւններ մտած էին այն ժամանակները ազգին մէջ որ ուրիշներէն աւելի՝ հոգելից սուրբ հայրապետին աչքին կզարնէին. օրինակի համար՝ եկեղեցականներն իրենց խօնարհական պաշտօնը հպարտութեան եւ գոռոզութեան նիւթ եւ պատճառ անելով, իրարու աստիճանը եւ պատիւը չէին ճանչնար. որով փոքրները մեծերուն չէին հընազանդեր, մեծերն ալ փոքրներուն հետ գոռոզ բռնակալութեամբ կ'վարուէին: — Տէրութեան մարդիկ գուցէ եկեղեցականներուն նայելով՝ մէկզմէկ կարհամարհէին, ու նախանձով եւ ատելութեամբ մէկմէկու

դէմ կ'մըխային: — Իշխաններն ու ազնուականները ընդդէմ եկեղեցական կանոնաց մերձաւոր խնամութիւններ կանէին իրարու հետ՝ որ իրենց ցեղին մէջ մնան իրենց ժառանգութիւնները: — Ժողովրդականք մեռելներու վրայ սաստիկ ողբ ու լաց անելով կ'ծեծկուէին՝ յարութեան յոյս չունեցող կռապաշտներու պէս, կամ թէ նաեւ մինչեւ ցայժմ տեղ տեղ մընացած պարսաւելի սովորութեան պէս: — Բորսաները անգթութեամբ դուրս կ'քշէին գեղերէն ու քաղաքներէն, Հրէից խտրական օրէնքներուն հետեւիլը պարտք համարելով այս բանիս մէջ: — Անապատական ճգնաւորները փոխանակ վանքերն ու անապատները քաշուելու, աշխարհի մէջ՝ աշխարհականաց տները կ'ընակէին, եւ փոխանակ նոցա բարի օրինակ տալու՝ կգայթակղեցընէին զանոնք իրենց թոյլ վարքովը, եւ այլն:

Ժողով արաւ մեծն ներսէս այս բաներուն համար՝ թագաւորին եւ իշխանաց հաւանութեամբը՝ Տարսն գաւառին մէջ Աշաիշատու եկեղեցին, որ սրբոյ Լուսաւորչին շինածն էր. եւ այն անկարգութիւնները հաստատուն կանոններով արգիլեց: Հայաստանի հովատուն եւ բարեխառն գաւառներուն մէջ հաստատեց կանոնաւոր ակեղակոցներ, այսինքն կոյրերու, կազերու եւ անգամալոյծներու համար ազքատանոցներ. ուրիակոցներ, այսինքն բոբոսներու հիւանդանոցներ, որիակոցներ, այսինքն օրբերու եւ օրբեւարիներու համար ազքատանոցներ. օտարականներու եւ պանդուխտներու համար հիւրանոցներ, եւ ուրիշ ասոնց նման բարեգործական տեղեր, որոց եւ կա-

լուածներ՝ այսինքն գեղեր ու ագարակներ սահմանեց որ անոնց եկամուտներովը պահպանուին: Եւ ասոնց ամենուն հոգաբարձու եւ վերատեսուչ գրաւ իւր հաւատարիմ՝ եւ առաքինի սարկաւազը՝ որ էր երանելին Խազ:

Նմանապէս կրօնաւորութեան բաղձանք ունեցողներուն համար շինեց վանքեր, նաեւ ճգնաւորական առանձին խուցեր՝ անապատներու մէջ, որպէս զի նորա ալ այն խստակրօնութիւնը յանձն առնելէն ետեւ՝ իրենց վիճակին պահանջած զգուշաւորութենէն դուրս չեկնէն:

Մեր պատմիչները չեն կշտանար մեծին ներսեսի այսքան եւ այսպիսի մեծագործութիւնները գովութեամբ յիշատակելէն. եւ իրաւունք ունին: Մեք ալ իրաւունք ունիմք զմայլելու եւ հիանալու՝ մտածելով թէ ինչեր կարողացեր է եւ կրնայ եղեր անել մէկ անձ մը յօգուտ եկեղեցոյ եւ Ազգի՝ նաեւ այն ժամանակները, երբոր յիրաւի Աստուծոյ փառքը եւ հայրենեաց օգուտն ու պայծառութիւնը միայն գրած է իրեն առջեւը նպատակ, եւ ոչ թէ աշխարհիս սնտի փառքը եւ իրեն անձին դիւրութիւնն ու կորուստական շահը:

Արշակ թագաւորն ու իշխանները եւ եպիսկոպոսները անսնելով սրբոյն այս կերպով մեր ազգն ու եկեղեցին պայծառացնելը, որոշեցին որ մեծն ներսէս Պատրիարք ասուելու իրաւունքն ունենայ նաեւ գործով, ինչպէս որ ունէր Քրիստոսաւանդ եւ առաքելա-

կան կանոնադրութեամբ, եւ այնուհետեւ իբրեւ ինքնագլուխ հայրապետ ամբողջ մեծ ազգի եւ եկեղեցոյ՝ նորա յաջորդներն ալ իրենց եպիսկոպոսներէն առնուն կաթուղիկոսական իշխանութիւնն ու ձեռնադրութիւնը, եւ ոչ թէ Կեսարիոյ Յունաց մեաբապօլիտներէն՝ ինչպէս որ մեր մինչեւ մեծին ներսեսի օրերն եղած հայրապետները կրնդունէին, բայց մեծամեծ գթուարութիւններով: Այն գթուարութեանց մէկն ալ այս էր անշուշտ՝ որ Յունաց բարձրաստիճան եկեղեցականացը մէջ սկսեր էր մըտնել տիրապետութեան հոգին, որով կպահանջէին որ Հայոց եկեղեցականներն առ հասարակ իրենցմէ կախումն ունենան, եւ իրենց ազգային արարողութիւնները՝ զորս ի սրբոյ Կոստանքէն ընդունած էին՝ փոփոխեն ու յունական արարողութեանց նմանցնեն: Դարձեալ, Հայաստանի թագաւորութիւնը այն ժամանակը մէկ կողմանէ թէպէտ Յունաց զօրաւոր կայսերութիւնն ունէր իրեն դրացի, բայց մէկալ կողմանէ Պարսից կրակապաշտ թագաւորներն էին անոր մօտիկ ու աւելի վտանգաւոր թշնամի, եւ ամենեւին չէին ախորժեր տեսնել որ Հայերը ոչ միայն հաւատակից են Յունաց, այլ եւ իրենց եկեղեցական երեւելի Գլուխը իբր թէ ի Յունաց կրնդունի հայրապետական իրաւունքն ու իշխանութիւնը:

Այն ժամանակները Յունաց Վաղենտինոս կայսրը մեր Արշակ թագաւորին դէմ նեղանալով, իւր Թէոդոս սպարապետը (որ յետոյ կայսր եղաւ ու անուանեցաւ մեծն Թէոդոս), շատ զօրքով Հայոց վրայ յու-

ղարկեց : Մեծն ներսէս Արշակայ աղաչանօրը Թէոգոսին առջեւը գնաց քանի մի երեւելի իշխաններով, շնորհալի եւ իմաստուն խօսքերով սպարապետին միտքը համոզեց որ պատերազմէն ետ կենայ, նորահետ ի միասին գնաց յօժարութեամբ կոտանդնուպօլիս, եւ կայսեր սիրտը շահեցաւ, եւ այնչափ սիրելի եղաւ անոր իւր քաղցր ու սրահառելի վարմունքովն որ կայսրը ոչ միայն սրբոյն մեծամեծ պատիւներ արաւ, այլ եւ սրբան պատանդներ որ կային քովը՝ Արշակայ կողմանէ յուղարկուած՝ ետ տուաւ թանկագին պարգեւներով : Այն պատանդներուն մէկն ալ Արշակայ եղբօրորդին էր՝ Գնէլ իշխանը : Եւ որովհետեւ Արշակայ առաջին կինը մեռած էր, կայսրը իւր ազգականներէն Ուլումպիագա անունով չքնաղ եւ գովելի օրիորդը Արշակայ հարսնացու յուղարկեց :

Այսպիսի փառաւորութեամբ դարձաւ մեծն ներսէս ի Հայաստան եւ ուրախացուց զամէնքը, մանաւանդ Արշակ թագաւորը : Բայց սա բնական թեթեւամտութեամբը՝ սիրով մտիկ անելով իւր Տիրիթ անունով միւս եղբօրորդւոյն չարախօսութեանցը, որսի մէջ մեռցընել տուաւ Գնէլը, եւ նորա փառանձեմ անունով գոռոզ ու չարամիտ կինը իրեն առաւ թագուհի՝ մինչդեռ Ուլումպիագան կենդանի էր. իսկ անդգամ փառանձեմը իւր չարութեանը գործիք դտաւ Մրջնիկ անունով անարժան քահանայ մը, նորա ձեռքովը թոյն խառնել տուաւ սուրբ հաղորդութեան մէջ, եւ սպաննեց Ուլումպիագան որ ինքը լինի նորա տեղը Հայոց թագուհի :

Արշակայ եւ նորա գործակիցներուն այսպիսի ասագին չարագործութիւնները տեսնելով սուրբ հայրապետը, թէպէտ շատ անգամ կոստէր կխրատէր, բայց մտիկ չէին աներ խօսքերուն, այլ կարհամարհէին ու կծագրէին ասածները. ուստի եւ սուրբը ցաւագին սրտով անիծեց զանոնք, ու ինքը Վաղարշապատէն դուրս առանձին տեղ մը քաշուած՝ Արշակայ վրայ կողբար : Քիչ ատենէն նախարարները չքիմանալով Արշակայ անկարգ կառավարութեանը, իրենց թագաւորին դէմ գլուխ քաշեցին, եւ Պարսից Շապուհ թագաւորը նորա դէմ գրգռեցին : Մինչդեռ Արշակ Շապուհի սիրտը առնելու կաշխատէր, անդիէն Վաղէս կայսրն ալ թշնամացաւ նորա հետ, եւ Թէոգոս զօրավարը շատ զօրքով Հայաստան յուղարկեց : Արշակ ամէն կողմէն նեղը մտած՝ նորէն սրբոյն ներսեսի ընկաւ, աղաչեց պաղատեցաւ որ ճար մը անէ՝ կայսեր սիրտը իջեցընէ. իսկ անյիշաչար հայրապետը՝ ընդունելով նորա զղջական խօսքերն ու խոստմունքները, եւս եւ մեծամեծ նախարարաց միջնորդութիւնը, առաջ մէջ մտաւ, զանոնք թագաւորին հետ հաշտեցուց, յետոյ առաւ Արշակայ Պապ որդին եւ ուրիշ ազնուականաց որդիք, հետը պատանդ տարաւ, գնաց Թէոգոսին, եւ նորա հետ կայսեր :

Բայց Վաղէս կայսրը արիտօսական էր, այսինքն Արիստի մոլորութեանը հետեւելով՝ Քրիստոսի աստուածութիւնը կուրանար. սրբոյն ներսեսի կատարեալ ուղղափառութեանը տեղեակ լինելով, իսկոյն հրամայեց որ արսորուի երանելին. եւ որովհետեւ եղանակը ձեռ

էր, նաւը սաստիկ փոթորիկով քառեցաւ ու Միջերկրականին (կամ Մարմառայի ծովուն) փոքրիկ անքնակ կղզիներէն մէկուն քարերուն զարնուելով կոտորեցաւ : նաւաւարներն իրենք զիրենք ձգեցին մակոյկը (սանսար) եւ ազատեցան . իսկ սուրբն ներսէս երկու սարկաւազով ու քանի մի քահանաներով մնաց այն տեղը մինչեւ ինն ամիս : Առջի բերան նոցա կերակուրը ծառերու արմատներ էին . յետոյ Աստուծոյ խնամօքը ծովը սկսաւ ձկներ նետել դուրս, անոնցմով կապրէին . հոն բղխեցուց սուրբը ալօթքով նաեւ բարեհամ ազբիւր մը, եւ ինքը բոլոր ժամանակը ալօթքով ու ճգնութեամբ կանցընէր :

Վաղէս կայսրը չարաչար սպաննուելէն վերջը՝ երբ որ նորա տեղը թագաւորեց Մեծն Թէոփոս, իսկոյն հրամայեց որ ուրիշ արտրեալ հայրապետաց հետ ի միասին ետ դարձուի արտրանքէն նաեւ սուրբն ներսէս . մեծ պատուով ընդունեցաւ զինքը, եւ այն օրերը կոսասանդնուպօլսոյ մէջ Մակեդոն ազանդապետին մոլորութիւնը հերքելու համար գումարուած ժողովոյն հարիւր յիսուն սուրբ հայրապետաց մէկն արաւ գերանելին :

Այնուհետեւ երբոր կալատրաստուէր մեծն ներսէս Հայաստան դառնալու, լսեց որ Արշակ Պարսից նապուհ թագաւորէն բռնուեր բանա գրուեր է ու հոն ինքզինքը մեռուցեր է . խնդրեց Թէոփոսէն որ Արշակայ Պապ օրդին թագաւոր գնէ Հայաստանի, եւ Յունաց զօրքով յուզարկէ որ Պարսիկներուն ձեռքէն առնուն ազատեն մեր հայրենիքը : Սիրով կատարեց

բարեպաշտ կայսրը սրբոյն խնդիրքը, եւ Պապ թագաւորը շատ զօրքով ճամբեց ներսեսի հետ Հայաստան :

Պարսիկները պատերազմի պատրաստուեցան Յունաց եւ Հայոց գէմ Ձիրաւ դաշտին մէջ . բայց սուրբ հայրապետը քրիստոնէից զօրքն ու զէնքերը օրհնելէն ետեւ՝ ելաւ նպատ լեռան գլուխը, որ Պայազխառ նահանգին մէջն է, ու բազկատարած աղօթքի կեցաւ Մովսէս մարգարէին նման, մինչեւ որ Պարսիկները սաստիկ ջարդուեցան, մնացածներն ալ փախան գնացին : Բայց քրիստոնէից բանակը կպատմէր ու կը վկայէր՝ թէ պատերազմին առենը կտեսնէինք որ տէրն ներսէս մեր առջեւէն կերթար, եւ ձեռքովը կցուցընէր թշնամիներն որ զարնեմք հալածեմք՝ Քրիստոսի խաչին զօրութեամբը :

Երբոր Հայաստան այս կերպով խաղաղացաւ ամէն կողմանէ, սուրբն ներսէս անդադար խրատ կուտար թագաւորին եւ իշխաններուն որ Աստուծոյ օրինացն ու պատու իրանացը համաձայն վարուին ու ժողովուրդը արգարութեամբ եւ հայրաբար կառավարեն : Բայց Պապ թագաւորը, գուցէ ոչ այնչափ տարիքին սակաւութենէն՝ որչափ ասպականեալ ընաւորութեանը անշահութենէն, այնքան եւ այնպիսի անկարգութեանց տուաւ ինքզինքն որ զզուելի եղաւ ամենուն, եւ սրբոյն ներսեսի յանդիմանութիւններէն խրատ սուներ լու տեղը՝ նորա գէմ ոխ պահելով, օր մը եկեղեաց դաւառին Խախ անունով գեղը սեղան պատրաստել տուաւ, հոն հրաւիրեց զերանելին, ու գինիի բաժակին մէջ թոյն խառնեց խմցուց անոր :

Ճաւերուն սաստկութենէն շուսով իմացաւ սուրբը
 թագաւորին արած դաւաճանութիւնը, բայց ամե-
 նելին չըրփոթեցաւ. փառք սուաւ Աստուծոյ որ նո-
 րա անուանը համար եւ նորա պատուիրանաց պահ-
 պանութեան նախանձախնդիր լինելուն համար՝ այն-
 պիտի խոստովանողական մահուան արժանի կ'լինի.
 ուստի ամենուն առջեւը թողութիւն խնդրեց յԱստու-
 ծոյ զինքը մեռցընողներուն. Միայն թէ թագաւորին
 սիրտը զղջումի բերելու համար ասաց. « Բայց դուն,
 ով թագաւոր, եթէ զիս մեռցընել կուզէիր՝ պէտք
 էր որ յայտնապէս սպաննել տայիր, ոչ թէ այսպիսի
 ցած կերպով »: Յետոյ ելաւ սեղանէն, գնաց իւր օթե-
 ւանը եկեղեցւոյն մօտ. հետը գնացին քահանաներէն
 ու սարկաւազներէն զատ նաեւ շատ մեծամեծներ,
 որ զանազան գեղթափներ տալով՝ կուզէին մահադե-
 զին ոյժը կտրել, բայց սուրբը չառաւ. « Ես արգէն
 կցանկայի՝ ասաց՝ հրապարակաւ նահատակուիլ Քրիս-
 տոսի սիրոյն համար, ինչպէս որ հրապարակաւ քարո-
 զեր եմ՝ միշտ նորա սուրբ պատուիրանքը. բայց
 ասոր ալ փառք՝ որ դարձեալ ճշմարտութիւնը քա-
 րոզելուս պատճառաւ կմեռնիմ, եւ ուրախ եմ որ
 մէկ օր առաջ կելնեմ այս ողորմելի աշխարհէս »:

Յետոյ պէսպէս հոգեշահ ու սրտաշարժ խօսքերով
 խրատներ տուաւ սուրբը քովիններուն՝ իբրեւ վեր-
 ջին կտակ: Պատմեց նոցա նաեւ այն մարգարէական
 տեսիլքը՝ զոր տեսած էր անբնակ կղզւոյն մէջ արսո-
 րուած ժամանակին, ու մինչեւ այն օրերը մէկու մը
 չէր յայտնած: Այն մարգարէութեանցը մէջ յայտ-

նապէս կգուշակէր Հայաստանին գլուխը գալիք աւեր-
 մունքները, թագաւորական իշխանութեան Արշակու-
 նեաց ցեղէն վերնալը, եւ կաթողիկոսական աստիճա-
 նին Լուսաւորչայ թողանց մէջ չմնալը. մահմէտա-
 կանութեան ելնելը, Թաթարաց յարձակմունքը,
 երուսաղեմի առնուիլը եւ սուրբ Խաչին գերի տա-
 րուիլը Պարսկաստան, եւ ուրիշ աշխարհիս երեսը լի-
 նելիք երեւելի փոփոխութիւնները, որ հեա զհետե
 կատարուած են եւ պիտի կատարուին:

Խօսակցութիւնն որ դադրեցուց, սկսաւ թոյնին
 կտըրտութէն գունդ գունդ արիւն գալ երանելոյն
 բերնէն երկու ժամի չափ. յետոյ ելաւ աղօթքի կե-
 ցաւ, ու ծնկի վրայ եկած թողութիւն խնդրեց զինքը
 մեռցընողին, աղօթեց մերձաւորաց եւ հեռաւորաց
 համար, մեծի եւ փոքու համար, որ ամէնքն ալ ար-
 ժանի լինին Աստուծոյ ողորմութեանը. խնդրեց ու
 հաղորդուեցաւ Քրիստոսի Տեառն մերոյ կենարար
 մարմնոյն եւ արեանը. ձեռքերն ու աչքերը վեր վե-
 րուց ուրախ եւ զուարթ սրտով ու ասաց. « Տէր Յի-
 սուս, ընկալ զհոգի իմ ». եւ այնպէս աւանգեց իւր
 ամբիժ հոգին ի ձեռս Աստուծոյ, մինչդեռ քովիննե-
 րը դառն տրտմութեամբ եւ հեկեկանօք կուլային:


Աստիկ սգոյ մէջ ընկղմեցաւ նաեւ ըոլոր Հայոց
 ազգը որ այնպիսի ցանկալի հայրապետէ այնպէս յան-
 կարծակի զրկուեցաւ. մինչեւ Պապ թագաւորն ալ
 ստիպեցաւ ձեւացընելու կեղծաւորութեամբ որ մեծ
 սուգի մէջ է, եւ հրամայեց որ փառաւոր հանգիսով
 թաղում անեն սրբոյն: Ինքն ալ ներկայ եղաւ յուղար-



կաւորութեանը, մինչեւ որ տարին սրբոյն մարմինը
երգերով եւ օրհնութեամբ նոյն եկեղեաց գաւառին
թիլ կամ թիլն աւան անունով գեղը, որ սրբոյն ներ-
սիսի կալուածքն էր, եւ եկեղեցւոյն մէջ թաղեցին.

Երկու սրբակաց ճգնաւորներ կային այն ժամա-
նակներն որ իրարմէ հեռու այլ եւ այլ լեռներու վե-
րայ կճգնէին. մէկը սուրբն Շաղիտա՝ ազգաւ ասորի,
որ սրբոյն ներսիսի հրամանաւր վանահայր ու վերա-
տեսուչ էր կրօնաւորաց առհասարակ, եւ միւսը
սուրբն Եպիփան՝ ազգաւ յոյն: Սոքա երկուքն ալ
իրենց տեղերէն տեսան ցորեկով որ սուրբն ներսէս
լուսաւոր կերպարանքով ամպերուն վերայէն յիայլա-
կի պէս գէպ ի երկինք կթռչէր, եւ հրեշտակաց ու
սրբոց անհամար բազմութիւնը՝ գիմաւորելու պէս
սրբոյն առջեւը գալով՝ մէջերնին աւին զինքն ու վեր
տարին: Իսկոյն իջան ճգնաւորներն իրենց լեռներէն
ու եկեղեաց գաւառն եկան. եւ երբ լսեցին թէ գեռ
նոր թաղեր են զսուրբն ներսէս թիլն աւանի մէջ,
գնացին տապանը տեսնելու, եւ այն միջոցին հիանա-
լով կպտամէին իրենց տեսած տեսիլքը իրարու եւ
ամենուն, եւ ամէնքը յիտաք կուտային Աստուծոյ:

Այսպէս կնքեց իւր բազմարդիւն կեանքը մեծ
հայրապետն մեր ներսէս Պարթեւ՝ գեռ հասակին
յիտուն տարին չաւարտած, քսան կամ քսանըհինգ
տարի կաթողիկոսութիւն անելէն ետեւ, յամի Տեառն
383, եւ յետ մահուանը եւս՝ աւանդութիւն կայ որ
քառասուն օր լուսեղէն սիւն երեւցաւ տապանին վրայ,
եւ շատ հիւանդներ բժշկութիւն կգտնէին գերեզմա-



նին հողէն, մանաւանդ ժամտախտէ ու փողացաւէ
բռնուողները: Եւ թէպէտ քանի մի հարիւր տարի
անցնելէն ետքը՝ այն եկեղեցին քանդուելով այլազ-
գեաց արշաւանքէն՝ սրբոյն ներսիսի գերեզմանն ալ
անյայտացաւ, բայց ասկից վեց հարիւր տարի առաջ
նորէն յայտնուեցաւ այս կերպով:

Քրիստոսի 1272 թուականին ատենները եկեղեաց
գաւառին առաջնորդ էր Սարգիս արքեպիսկոպոս
առաքինի եւ աստուածասէր անձը, իսկ թիլն աւանի
վանքին վանահայր՝ ներսէս վարդապետ մը: Այն վան-
քի միաբաններուն մէջ սարկաւազ մը կար՝ Պատուա-
կան անունով, յիրաւի ամենայն պատուոյ արժանի
իւր սրբակրօն վարքովը: Այս սարկաւազը մէկ գիշեր
մը տեսիլք կտեսնէ որ ծերունի մարգուռն մէկը՝ ծի-
րանի հագուստ հագած՝ քահանայական ձեւով, ջորիի
վրայ հեծած՝ կուգայ կմանէ վանքի դռնէն ու կասէ.
«Սարկաւազ եղբայր, սրն է այստեղ Հանգուցեալ
եկեղեցի ասուածը»: Սարկաւազը ջորիին սանձէն կը-
բռնէ, վար կիջեցընէ զծերունին, ու առջեւէն եր-
թալով կտանի մինչեւ հանգուցեալ եկեղեցին ու Սա
է կասէ: Վասն զի թէպէտ այն եկեղեցւոյն մէջ թա-
ղուած էին տասնուվ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
որդիքն ու թոռունքը, եւ յետոյ մեծն ներսէս, բայց
652-ին այլազգիք քանդեր էին այն Լուսաւորչայ շի-
նած եկեղեցին, եւ տեղոյն բնակիչները այսքան մի-
այն գիտնալով՝ թէ մեր սուրբ հայրապետները թա-
ղուած են հոն, անունը գրեւ էին Սուրբ Հայրապե-

տաց եկեղեցի, եւ սովորաբար կանուանէին Հանգու-
ցեայ եկեղեցի, իբր թէ հանգչած՝ այսինքն մարած կամ
անցած եկեղեցի: Արդ ծերունին ներս կմտնէ ու կա-
սէ սարկաւազին. «Այստեղս է սրբոյն ներսիսի գերեզմա-
նը»: ձեռքի գաւազանովն ալ կցուցընէ գլխոյն տեղը.
— գաւազանը գետնին զարնելուն պէս փայլակի նման
լոյս կցատքէ դէպ ի վեր: «Գնա ասա առաջնորդին,
կասէ ծերունին, ու եկէք հանեցէք սրբոյն ոսկորները.
չորս անգամ է՝ կասեն ինձի որ գամ՝ ցուցընեմ՝ քե-
զի այս գերեզմանը. ես ծերութիւնս պատճառ բըռ-
նելով չեկայ, մինչեւ այս ջորին տունն ինձի որ նե-
ղութիւն չքաշեմ»:

Սարկաւազը կարթըննայ քնէն, կհիանայ տեսած
երազին ու կպատմէ վանահօրն ու վանականաց: Նորա
կպատասխանեն թէ աղօթք արա որ նորէն տեսնես
այդ տեսիլքը: Այնուհետեւ երեք գիշեր ալ զինուո-
րի կերպարանքով կտրիճ մը կերեւնայ սարկաւազին
եւ սաստիկ կպատուիրէ որ անպատճառ հանեն գե-
րեզմանէն սրբոյն մարմինը: Այն ատեն ներսէս վար-
դապետը կերթայ երզնկայ Սարգիս եպիսկոպոսին ու
տեղնիտեղը կպատմէ անոր սարկաւազին տեսածները:
Առաջնորդը մեծ ուրախութեամբ փառք կուտայ Աս-
տուծոյ եւ կհրամայէ որ երթայ վարդապետը բոլոր
միաբաններով այն գիշերը հսկում անէ, երկրորդ օրը
փորեն տեղը, մինչեւ որ գերեզմանը երեւնայ եւ
իրեն իմացընեն որ դայ հանէ այն Հայաստանեայց
թանկագին գանձը:

Այնպէս արին վանականները, եւ գերեզմանը գըրա-

նուելուն պէս իմաց տունն արքեպիսկոպոսին: Գերեզ-
մանին երկայնութիւնը երեք կանգուն էր, լայնու-
թիւնը իբր մէկ կանգնաչափ, իսկ խորութիւնը չորս
աստիճանով մէկ մարդաչափ, քարուկիր դմբեթաձեւ
շինած: Գերեզմանին արեւմտեան կողմը կեցած էին
սրբոյն ոսկորները այն կերպով որ երեսը դէպ ի ա-
րեւելք նստած է եղեր աթոռով: Նոյն գերեզմանին
մէջ սրբոյն ներսիսի առջեւովը կային նաեւ ուրիշ
մեծ մեծ ոսկորներ, բայց ամբողջ մարմնոյ ոսկերք
չէին. կերելի որ սրբոյն թաղման ժամանակը հետը
գրուած ուրիշ սրբոց մասունք էին անոնք:

Սարգիս արքեպիսկոպոսը բոլոր եկեղեցական պաշ-
տօնեաներով ու զարդերով եւ շատ ժողովրդով սըր-
բոյն գերեզմանին քով եկած, սկսաւ լալով ու սըր-
տաշարժ խօսքերով իբրեւ ընդ կենդանւոյ խօսիլ
սրբոյն հետ եւ ասել. «Ո՛վ սուրբ Աստուծոյ, ո՛վ
երկրորդ լուսաւորիչ ազգիս Հայոց, ահա ժամանակն
է որ գթաս ողորմիս խեղճ ողորմելի ազգիս: Ահա
սոսկալի ալեկոծութեան մէջ կճըլփայ կտատանի եկե-
ղեցւոյ նաւակը. դուն, ո՛վ իմաստուն նաւավար, դուն
օգնէ մեզի: Գրլ ստոսի սուրբ գառլինքը մօլորած են,
եւ կենդանարար կերակրոյն կարօտ. ամէնքն ալ լեռ-
ներու ձորերու մէջ ցիր ու ցան եղած՝ անխնայ պա-
ւըռտող գայլերու բերանը մատնուած են. ժամա-
նակն է որ հովիւդ քաջ վազես ետեւներէն ու ազա-
տես քու գառլինքդ այն գայլերէն: Հիւանդ է ահա
եկեղեցւոյ մարմինը, ոչ բժիշկ կգանէ իւր ցաւերը
հասկըցող, եւ ոչ դեղ ու ճար՝ մահաբեր հիւանդու-

Թիւնը վարատող, մարմնոյն մէկ կտորը միայն չէ որ վրան սպեղանի գնես, այլ բոլորովին խանգարուած ու վէրքերով լցուած է. դուն, սլ վժիշկ ճարտար, նոյե վրան խղճալով, աղաչէ մարդատէր բժշկին՝ հասարակաց ստեղծողին, որ լսէ մեր պաղատանքը եւ ազատէ զտառապեալքս այս մեր քաշած անտանելի նեղութիւններէն»:

Ասոնք եւ ասոնց նման խօսքեր ասելէն ետեւ հրամայեց Սարգիս եպիսկոպոսն որ քահանայք եւ ժողովուրդք առհասարակ ընկնին երանելոյն սուրբ ոսկերաց առջեւն ու մեղանց գոչեն՝ թէ իրենց նախնեաց կողմանէ, թէ ի գլմաց բոլոր ազգին, եւ թէ իւրաքանչիւր մարդ իրեն յանցանացը համար: Այն ատեն առաջ անցաւ ներկայ երեւելի վարդապետներէն մէկը, որ կարծեօք Յովհան Երզնկացին էր, եւ ազգին բերնէն զղջական ձեւով խօսեցաւ սուրբ հայրապետին պատուական նշխարացը հետ: Նորա սրտաշարժ խօսքերը սրբան աւելի իրաւամբ կարող էինք արդեօք ասել նա եւ մեր՝ թէ որ սրբոյն գրեթէ նորէն անյայտացեալ սուրբ մարմնոյն գոնէ մէկ մասին հանդիպելու բարեբազդութիւնն ունենայինք այս դառն եւ բազմավտանգ ժամանակիս մէջ. վասն զի այսպէս ասեր է երանելի վարդապետը, ինչպէս որ ախանատես պատմիչը մէջ կրէրէ. «Սեղանք քեզ հայր սուրբ, եւ հոգւոց մերոց վերակացու, մեղաք մեք եւ հարքն մեր, անօրինեցաք եւ յանցեաք: Թէ որ քու քաղցր խրատներուդ համն առած ու պահած լինէինք, այսօրուան օրս զուրկ չէինք մնար մեր լուսաւորիչ հայրերուն խնամքէն. իրա-

ւամբ ծածկեց զմեզ արամութեան խաւարը, որովհետեւ քու խրատներուդ ցուցուցած լուսաւոր ճամբէն դուրս ելանք: Արդարութեամբ եւ իրաւամբ այս դառն աղքատութեան մէջ ընկանք, վասն զի չառինք չղահեցինք մեր սրտին մէջ Աստուծոյ օրէնքներուն գանձը որ ամէն ոսկիէ արծրիցէ ու թանկագին գոհարներէ աւելի ցանկալի է: Անոր համար եկան տիրեցին մեր վրայ մահաբեր ցաւեր հիւանդութիւններ՝ որ Աստուծոյ կենդանարար խօսքերը չճաշակեցինք. անոր համար սաստիկ քաղցածութեամբ ու անտանելի ծարաւով սագնապեցանք՝ որ Աստուծոյ խօսքերուն կերակուրը ձեզի պէս քաղցր հարց ձեռքէն չընդունեցանք ու չվայելեցինք: Մեր մոռցանք քու խաղաղարար խրատներդ, սլ հայր մեր հոգեւոր, դուն ալ զմեզ մոռցար սլ աջգ յաջողակ, աջգ՝ որ հրեզն պարիսպ էր Հայոց զօրքերուն, աջգ՝ որ Հայոց թագաւորներուն գրօշը կրարձրացրնէր, աջգ՝ որ անթիւ անհամար շնորհք ու պարգեւներ կրաշխէր ամենուն, աջգ՝ որ եկեղեցւոյ կաթնիկեր աղայոց սնունդ ու զրթութիւն կուտար: Արդ այժմ հաշուէ հայր՝ քու հայրական գթութեամբդ. ներքէ քու յանցաւոր որդւոցրդ պարտքերը: Հայրը որդւոյն կղարնէ՝ կցաւրնէ, բայց ինքն ալ առանց ցաւի չմնար. այլ գաւազանով խրատուած անհնազանդ որդիէն ալ աւելի ցաւ կղբայ՝ ծնողական գթոյն զօրութեամբը: Ահա եկան հասան՝ կատարեցան մեր վրայ քու մարգարէական հոգւով գուշակածներդ, սլ հայր սուրբ, եւ մեր պատուիրանազանցութեան դառն պատճիւնը՝ Աստուծոյ արդար

պատիժները քաշեցինք: Բայց արդ բաւական է, հայր, հաշտուէ մեզի հետ ու հաշտեցուր զմեզ մեր երկնաւոր հօրը հետ, իջեցուր մեր վրայ նորա անսպառ գթութեանն ու ողորմութեան աղբէլը»:

Սարգիս եպիսկոպոսը առաւ այնուհետեւ սրբոյն ներսիսի ոսկորները: Ճերմակ մաքուր կտաններու մէջ պատեց ու երկու սնտուկի մէջ տեղաւորեց, իւր մասնիւովը կնքեց. միայն երկու բաւական մեծ մասունք յանձնեց քահանայից որ ջերմեռանդ ուխտաւորաց ցուցնելու եւ համբուրել տալու համար զգուշութեամբ պահպանեն: Այլազգիք որ այն ժամանակները տիրած էին Հայաստանի, տեսնելով որ Հայերը ամէն կողմերէ կգիմեն սրբոյն գերեզմանը տեսնելու եւ մասունքը համբուրելու, ուղեցին վանքէն գողնալ վերցընել, եպիսկոպոսը այդ կասկածը առնելուն պէս դնաց վանքը, առաւ սուրբ նշխարքը՝ բերաւ քաղաք, սրբոյն երկու ձեռքի ոսկորները մէկմէկ արծրթէ ձեռքերու մէջ ամփոփեց, գլուխն ալ նոյնպէս մեծկակ արծրթէ գլխու մէջ դրաւ. մնացած ոսկորները քաղցրահամ գինիով լուաց, անուշահոտ եղով օծեց պահեց: Յետոյ գերեզմանին վրայ եկեղեցի շինեց՝ ներսէս հայրապետ անունով, եւ այնուհետեւ երկար ժամանակ այն վանքը եղաւ Երզնկայու առաջնորդաց բնակարանը: Սարգիս եպիսկոպոսը սրբոյն ներսիսի աջ բազուկը դրաւ եկեղեցւոյն աւագ սեղանին ներքեւը, միւս բազուկն ալ դրաւ եփրատէն անդին՝ նոյնպէս իրեն կանգնած Տիրաշէն անունով եկեղեցին:

Բայց թէ այժմ՝ ուր են սրբոյն այն եւ ուրիշ պատուական ոսկորները՝ աւանդ եւ ավսոս որ յայանի չէ մեզի. վասն զի Թիլն աւանի եկեղեցին այժմ գրեթէ դարձեալ աւերակ է, եւ կասուի Ջոխսակ Հայրապետ, իսկ Տիրաշէն կամ Մեծն Ներսիս ասուած վանքը գեռկեցած է, բայց այն եւս անխնամ:

Մեծին ներսիսի պատուական նշխարաց յայտնուելուն առիթովը շարագրած կերբէի Յովհան Երզնկացին այն սուրբ հայրապետին վրայ եղած գեղեցիկ շարականը, որոյ այս տուները աւելի նշանաւոր կհամարիմք.

«Որ յերջանիկ ընտրեալ սրբոց հայրապետացն ժողովոյն (Կոստանդնուպոլսոյ) գերագոյն փառօք պատուեցաւ սուրբն Ներսէս, դաւանեալ Աստուած զչոգին ճշմարիտ ընդ Հօր եւ Որդւոյ:

«Որ ի վերայ պատուիրանաց թագաւորին երկնաւորի (Քրիստոսի) զբաժակ մահու ընկալաւ ի թագաւորէն (ի Պապայ), եւ փոխեցաւ ի յերկինս ի լուսեղէն յառագասան: . . .

«Այսօր տօնէ եկեղեցի զյիշատակ սրբոյն ներսիսի, Հայաստանեայց լուսաւորչի, արի եւ քաջ հովուապետի ընտրեալ ի գլուխ հօտին Քրիստոսի:

«Որ օրհնիս ի հրեղինաց անլուելի ձայնիւ հնչմամբ, շնորհեցեր մեզ գեղ կենաց զանմարմնական վարուք մաքրեալն զհողանիւթ նշխար սրբոյն ներսիսի . . .:

«Որ ի ստունգանել թագաւորացն աստուածային քօ օրինաց, զպատուհաս բարկութեան մերոյ յառաջագոյն ժամանակօք յայանեալ ցուցեր սրբոյն ներսիսի. աղօթիւք սորա ողորմեա մեզ Աստուած:

« Այսօր զուարճացեալ ասնեն երկնայինքն ընդ մարդկան, պարակից եղեալ փրկութեան մերոյ. քանզի յայանեցաւ մեզ հոգեւոր դանձն լուսոյ՝ արեւելեան արեգականն ճառագայթ սուրբն ներօէս. բարեխօսութեամբ սորա, Տէր, պարգեւեա զխաղաղութիւն Հայաստանեայց աշխարհէ:

« Այսօր վերստին նորոգեցաւ քահանայական դատադանն գեղեցկապէս ծաղկեալ պայծառութեամբ (ըստ օրինակի Ահարանեան գաւազանին). քանզի շնորհեցաւ հովիւն քաջ բանաւոր հօտի, յարմատոյ Լուսաւորչին բողբոջ բուսեալ սուրբն ներօէս. բարեխօսութեամբ սորա, Տէր, հաստատեա զիշխանութիւն հայրապետական աթոռոյ »:

Մեծին ներսեսի հետ ի միասին կոծնեմք նաեւ նորա Խաղ սարկաւազին ասնը. վասն զի այս երանելիս մեր սուրբ հայրապետին հաւատարիմ աշակերտ եւ հետեւող լինելով, նորա իրեն յանձնած պաշտօններն ու գործերը այնպիսի անխոնջ եռանդով ու ճշգրտութեամբ կկատարէր որ սուրբն ոչ միայն Բաղրեւանդայ եպիսկոպոս ձեռնագրեց զինքը, այլ եւ իւր Յունաստան դնացած ու մնացած ժամանակները՝ անոր յանձնեց բոլոր Հայաստանի եկեղեցեաց հոգն ու կառավարութիւնը:

Հիւանդանոցներու եւ հիւրանոցներու վերատեսուչ եղած ժամանակը Խաղ եպիսկոպոսը այնքան խնամօք կհոգար եւ կդարմանէր ցաւադարներն ու աղքատները՝ որ երբոր անգամ մը նոցա համար

պատրաստուած պաշարները հատան, աղօթքով առ Աստուած գիմեց, եւ շտեմարանները լցուեցան ամենայն աղէկութեամբ, ինչպէս որ ատենով եղիա եւ եղիսէ մարդարէից աղօթքովը արած էր Աստուած:

Սրբոյն ներսեսի նման անաչառ էր նաեւ երանելին Խաղ՝ երբոր հարկ կլինէր յանգիմանել թագաւորին եւ մեծամեծաց անիրաւութիւններն ու անպատշաճ վարմունքը: Այսպիսի անաչառ քարոզիչներէն մարդիկ կպահանջեն սովորաբար՝ որ նոցա վրայ աչքի դարնող պակասութիւններ ամենեւին չգանուին. ապա թէ ոչ՝ անկից առիթ կառնուն իրենց լսած յանգիմանութեանց դժը կտարելու, եւ շատ անգամ նաեւ արհամարհելու զանոնք: Այն երանելոյն վրայ մեծ պակասութեան տեղ կղնէին նորա մաքուր ու փառաւոր հազուսաններ հագնիլը եւ ձիով քալելը: Երբոր ականջը հասաւ այն բամբասանքը, իսկոյն ըզզուշանալով տգէտներու եւ ակարամիտներու բամբասանքին պատճառ լինելէն, մէկգի գրաւ հազուսաներու շքեղութիւնը, քուրձ հագաւ, եւ իշու վրայ հեծած կանէր իւր ճամբորդութիւնները, այնպէս որ այնուհետեւ ոչ որ չէր կրնար արատ դնել նորա վարուց սրբութեանը:

Արշակ թագաւորը կամսարականաց ցեղը ջնջելու մտքով՝ անսնցմէ շատը անգթութեամբ ջարդեր մեռուցեր էր, եւ հրամայեր էր որ նոցա մարմինները շներուն առջեւ ձգուին. քանի մը սայլորդներ այն մարդկանց սկոբները ժողված ու թաղած լինելուն համար՝ Արշակ այն սայլորդներն ալ կախել տուաւ

անիրաւութեամբ: Թագաւորին այս անողորմ գործերը տեսնելով սուրբն Խազ, դնաց յանդիմանեց զինքը անաչառութեամբ. իսկ նա փոխանակ զգաստանալու՝ հրամայեց որ քաշկըռտելով առնուն տանին զերանելին ու քարկոծեն: Վրայ հասան Ապահունեաց նախարարներուն ցեղէն քանի մի քաջ կարիճներ, որ ազգականութիւն ալ ունէին երանելոյն հետ, քաշեցին հանեցին իրենց թուրերը, սարսափեցուցին այն մարդիկն որ քարկոծելու կտանէին զԽազ, եւ զինքը առին տարին իրենց գաւառը, Մանազկերտի կողմերը, Բայց սուրբն Խազ այն չարչարանքէն հիւանդանալով՝ այնուհետեւ շատ չապրեցաւ, ու խոստովանողական մահուամբ վախճանեցաւ՝ քանի մի տարի առաջ քան զսրբոյն Ներսիսի վախճանիլը: — Որոց բարեխօսութեամբը ողորմի Աստուած մեր տառապեալ ազգին, եւ յարուցանէ այնպիսի արժանաւոր հովիւներ ու հովուապետներ որ կարողանան սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Վուսաւորչին հոգեւոր աւազանով ծնած, եւ մեծին Ներսիսի անխոնջ աշխատութեամբը դարմանուած Հայաստանեայց եկեղեցւոյ որդիքը սնուցանել հովուել եւ ինամել, եւ ամենայն բարեկարգութեանց ազբիւրը, որ է սէրն ու միաբանութիւնը, մեր վարանեալ եւ վարատեալ ազգին մէջ հաստատել եւ տարածել. ամէն:





ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ.

Աւագ Երկուշաբթի.
 Աւագ Երեքշաբթի.
 Աւագ Չորեքշաբթի.
 Երուսաղեմի առումն ու տաճարին կործանումը.
 Կոստանդնուպոլսոյ առումն յՅամանեանց.
 Աւագ Հինգշաբթի.
 Աւագ Ուրբաթ.
 Չատիկ սուրբ Յարութեան Տեառն.
 Սուրբ Հովիտիմեանք.
 Մեծն Ներսէս Պարբեա.

ՊԱՏՐԱՍՏՔ Ի ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

Համրարձումն.
 Հոգեգալուստ.
 Վարդափառ.
 Վերափոխումն.
 Սուրբ Խաչ.
 Ծնունդ եւ Յայտնութիւն Տեառն.
 Տեառնընդատաջ.
 Բուն Բարեկենդան.
 Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ.
 Որդիք եւ բողոսնք սրբոյ Լուսաւորչին.
 Սուրբ Սարգիս Չորավար.
 Սուրբ Մինաս.
 Սուրբ Անտոն ճգնաւոր.
 Յոր երանելի.
 Թաղեոս առաքեալ, Ս. Սանդուխտ կոյս, եւ Ս. Շուշանիկ.
 Ժամ եւ Ժամերգութիւն.
 Երկինք.
 Արեւն ու Մոլորակները.
 Ձերմութիւն եւ Ձերմաջափ.
 Մետեորազիտութիւն, կամ Գուշակութիւնք օդոց.
 Մրջինք եւ Մեղուք.
 Տնանութիւն.
 Եգիպտոսի սնութիւնները, եւ այլն:





Գին սևսրակիս 20 ֆոփ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՄԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՍՏ-ԱՐՄ ՇԵՐ
Ս. Ա. ԱՄԵՆՈՒՄ
ՄԱՍԻՍ

